Պետական կրթական չափորոշիչներ մշակողների և ՄԿՈՒԶԱԿ-ի աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ

ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից մշակված և ԿԱԻ ղեկավարության կողմից հաստատված ծրագրով վերապատրաստվել են պետական կրթական չափորոշիչներ մշակող 50 փորձագետներ:

Նույն ծրագրով վերապատրաստվել են նաև ՄԿՈՒԶԱԿ-ի 11 աշխատակիցներ:

Վերապատրաստումը իրականացրել են՝

1. Պիպոյան Սամվել «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի» տնօրեն,
2. Աշոտ Սահրադյանը՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի» տնօրենի տեղակալ,
3. Արամ Ավագյանը՝ «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամի տնօրեն,
4. Գառնիկ Նալբանդյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ազգային ինստիտուտի տնօրենի տեղակալ,
5. Ռոբերտ Իսրայելյան՝ Եղեգնաձորի «Գիտելիք» համալսարանի ուսումնական գծով պրոռեկտոր
6. Ռոման Նահապետյան՝ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի տնօրենի խորհրդական:

Վերապատրաստման թեմաներն ու ակնկալվող արդյունքները բերված են ստորև.

N	Թեմաներ	Ակնկալվող նպատակը
1	Պետական կրթական չափորոշիչներ - սահմանումը, դերն ու նշանակությունը կրթութ-յան որակի ապահովման գործում - «Կրթության մասին», «Նախնական մասնագի-տական (արհեստագործական) և միջին մասնա-գիտական կրթության մասին» ՀՀ օրենքները - նախնական մասնագիտական (արհեստագոր-ծական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը - Որակավորումների Եվրոպական և ազգային շրջանակները - զբաղմունքների դասակարգիչը, դրա ուսումնա-սիրումը և դրույթների կիրառման մոտեցումների բացահայտումը - չափորոշիչները և աշխատաշուկան, դրանց կապը և փոխադարձ ազդեցությունը - միջազգային փորձը չափորոշիչների մշակման գործում - մասնագիտական չափորոշչի օրինակի նախնա-կան ուսումնասիրում և քննարկում խմբերում	Դասընթացի ունկնդիրները կծանոթանան մասնագիտական կրթության ոլորտը կար-գավորող հիմնական օրենսդրական ակտե-րին, պատկերացում կկազմեն պետական կրթական չափորոշչի կարևորության մա-սին, կաշխատեն այն փաստաթղթերով, որոնք էական դեր ունեն կրթական չափո-րոշիչների մշակման համար: Համապատասխան ուշադրություն կդարձ-վի նաև այլ երկրներում ընդունված մոտե-ցումների, առկա փորձի ուսումնասիրման վրա: Էական ուշադրություն է դարձվելու դասընթացի մասնակիցների կողմից գործնական աշխատանքներ կատարելու հանգամանքին:
2	Աշխատանքային հարաբերություններ: Գործարար հաղորդակցություն:	Կպարզաբանվեն թիմային աշխատանքի առանցքային հարցերը և ապահովելու մո-տեցումները: Դրանք էական նշանակութ-յուն կունենան խմբերի անդամների հնա-րավորությունները արդյունավետ օգտա-գործելու համար:

3	Մասնագիտական չափորոշիչ: Կառուցվածքը, բաղա-դրիչների մշակման և կառուցվածքի ձևավորման մոտե-ցումները: Մասնագիտական չափորոշչի մոդուլների մշակումը:	Ներկայացվելու և պարզաբանվելու է մաս-նագիտական չափորոշչի կարևորությունը կրթական չափորոշչի մշակման համար: Զբաղմունքների բնութագրիչների հիման վրա ներկայացվելու է մասնագիտական չափորոշչի բաղադրիչները: Գործնական աշխատանքի ընթացքում մասնակիցները ձևավորելու են մասնագիտական չափորո-շիչներ համապատասխան մասնագիտութ-յունների համար:
4	Պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգի մասին ՀՀ կառավարության որո-շումը: Չափորոշիչների բաղադրիչները: ՀՀ ԿԳ նախա-րարի 18.01.2007 նո. 17-Ա/Ք հրամանը: Պետական կրթական չափորոշչի բաղադրիչների բո-վանդակության պարզաբանումներ և մշակման մոտե-ցումները:	Կներկայացվի Պետական կրթական չափո-րոշչի բովանդակությունը և համապատաս-խան բաժիններում ներառվող բաղադրիչ-ները: Այս հարցերը ճիշտ պատկերացնելը կարևոր է հետագայում փաստաթղթերը մշակելու ժամանակ: Հայաստանում մշակված չափորոշիչների օրինակների ներկայացում և քննարկում:
5	Մոդուլային ուսուցում: Առանձնահատկությունները: Ուսումնառության մոդուլների մշակման առանձնահատ-կությունները: Ըստ մասնագիտական չափորոշչի պահանջների ուսումնառության մոդուլների մշակում:	Կներկայացվի մոդուլային ուսուցման առանձնահատկությունները և տարբերութ-յունը ըստ առարկաների իրականացվող ուսուցումից: Կպարզաբանվեն մոդուլների մշակման առանցքային հարցերը և կմշակ-վեն մոդուլների բաղադրիչները:
6	Մի քանի փորձնական մոդուլների ինքնուրույն մշակում խմբերում	Յուրաքանչյուր խումբ որոշակի մասնագի-տության համար կմշակի մոդուլային ծրա-գիր՝ առաջադրված բաղադրիչներով: Մշակված ծրագիրը ներկայացնելիս նպա-տակահարմար կլինի բացատրել մոտե-ցումների տրամաբանությունը:
7	Մասնագիտության ուսումնական պլանը անցումային և առաջանցիկ տարբերակներով: Ուսումնական պլանի ձևավորման սկզբունքները և հիմնական կանոնները: Փորձնական ուսումնական պլանի մշակում խմբերում:	Ուսումնական պլանների հետ աշխատան-քը կարևորվում է այնքանով, որ պատ-րաստվող խմբերի անդամները հետագա-յում կարիք են ունենալու զբաղվել նաև ու-սումնական պլաններ և ծրագրեր կազմե-լով: Այս հարցը կարևոր է նաև այնքանով, որ նպաստելու է կրթական չափորոշչում հարցերի ավելի արդյունավոր դրմանը:
8	Ըստ մոդուլային ծրագրերի ուսումնառության գործընթացի պլանավորման գործողությունները	Մոդուլային ուսուցման փաստաթղթերի համար խմբերը կկազմեն ուսումնառության գործընթացի փաստաթղթերը: